ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<22>> Դեկտեմբերի 2024թ. Ն ՄՈ/556 -Ա

ք. Արմավիր

ԼԻԼԻԹ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ «ՄԵԾԱՄՈՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2024 թվականի նոյեմբերի 19-ի զեկուցագիրը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Մեծամորի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխարհագրության ուսուցիչ Լիլիթ Հայրապետյանին՝ մինչև հիմքի վերացումը:
2. Լիլիթ Հայրապետյանի աշխատանավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **Խ. ՄԿՐՏՉՅԱՆ**